Հայտարարություն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի դրույթներով, հայտարարում է միջին մասնագիտական կրթական ծրագրերի **Հաշվապահական հաշվառման** մասնագիտական մոդուլներ և առարկաներ դասավանդող դասախոսների թափուր հաստիքների մրցույթ:

Դասավանդվող առարկաներ

Մասնագիտական առարկաները կամ մոդուլները	**Ժամերը**
Ֆինանսական փաստաթղթաշրջանառության կազմակերպում	136
Պաշարների հաշվառում	240
Դեբիտորների և կրեդիտորների հաշվառում	366
Ոչ նյութական ակտիվների հաշվառում	150
Սեփական կապիտալ: Եկամուտների և ծախսերի հաշվառում	294
Հիմնական միջոցների հաշվառում	294
Դրամական միջոցների հաշվառում	240
Հաշվապահական հաշվառումը ապահովագրական ընկերություններում	120
Հաշվապահական հաշվառումը բանկերում	432
Հարկային օրենսդրության կիրառումը հաշվապահական հաշվառման գործում	420

Պետական կրթական չափորոշիչով դասավանդողին ներկայացվող պահանջներ՝ բարձրագույն կրթության «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությամբ տնտեսագիտության մագիստրոսի կամ բակալավրի որակավորում[1], բարձրագույն կրթության «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» կամ «Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի» մասնագիտություններով տնտեսագիտության կամ ֆինանսների բակալավրի և մագիստրոսի կամ ինտեգրված կրթական ծրագրի շրջանավարտի մասնագիտական որակավորում[2], միջին մասնագիտական կրթության «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության կրթական ծրագրով համապատասխան մասնագետի

[1] ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշումից հետո, 2018 թվականից սկսած, ՀՀ բուհերի շրջանավարտների համար:

[2] ՀՀ կառավարության 1997 թվականի մայիսի 29-ի N 154 որոշման գործողության ժամկետում ՀՀ բուհերի շրջանավարտների համար՝ մինչև 2003 թվականը ներառյալ, 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1933-Ն որոշման որոշման գործողության ժամկետում ՀՀ բուհերի շրջանավարտների համար՝ մինչև 2011 թվականը ներառյալ, 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշման գործողության ժամկետում ՀՀ բուհերի շրջանավարտների համար՝ մինչև 2017 թվականը ներառյալ:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (լրացվում է տեղում),
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. անձը հավաստող փաստաթուղթ (բնօրինակը և պատճենը),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն (Ձև 4),
6. մեկ լուսանկար՝ 3*4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը և/կամ գիտական աստիճանը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի օգոստոսի 01-ից 2022թվականի օգոստոսի 12-ը ներառյալ, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 16:00-ը:

Փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին՝ ք.Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կենտրոնական մասնաշենք, 4-րդ հարկ, 401 աշխատասենյակ:

Մրցույթը տեղի կունենա 25.08.2022թվականին, ժամը 11:00-ին, հասցե՝ ք.Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կենտրոնական մասնաշենք: